«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

22 Դեկտեմբերի 2023, N 6 - 5

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ, ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻՆ SCOPUS ԳԻՏԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N 10 - 3 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ SCOPUS / WEB OF SCIENCE ԳԻՏԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՆՈՐԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ» ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 17-րդ կետի 8-րդ ենթակետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի աշխատակիցներին, ասպիրանտներին և հայցորդներին Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված հրապարակումների համար հոնորարներ տրամադրելու կարգը» (կցվում է):
2. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2022 թվականի մարտի 23-ի N 10 - 3 որոշմամբ հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի աշխատակիցներին Scopus / Web of Science գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հրապարակումների համար հոնորարների տրամադրման կարգը»:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. դեկտեմբերի 22
Երևան